ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 9-ից 11-ը Մադրիդում (Իսպանիայի Թագավորություն)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Մադրիդ (Իսպանիայի Թագավորություն)
   2019թ. դեկտեմբերի 9-ից 11-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն՝ 2019թ. դեկտեմբերի 2-ից 13-ը Մադրիդում (Իսպանիայի Թագավորություն) ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 25-րդ համաժողովին (COP-25), նեառյալ դեկտեմբերի 10-ից 11-ը կայացած բարձրաստիճան հատվածի հանդիպման երկրորդ մասին և Կայուն նորարարության ֆորումին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 25-րդ համաժողովի նպատակն էր հզորացնել մասնակից պետությունների բարձր մակարդակի ներգրավվածությունը կլիմայական գործողությունների իրականացման գործում: Համաժողովը հնարավորություն ընձեռեց նաև ներկայացնել այն եզակի տեսլականը, թե ինչպես են շահագրգիռ կողմերը համատեղ ջանքերով դիմակայելու կլիմայի փոփոխության հրատապ մարտահրավերներին:
- Վերոնշյալ համաժողովի շրջանակներում ս.թ. դեկտեմբերի 10-ին մասնակցել եմ բարձրաստիճան հատվածի հանդիպմանը, որտեղ հանդես եմ եկել ազգային զեկույցով:

  Խոսել եմ Հայաստանում իրականացվող բնապահպանական քաղաքականության օրակարգի մասին՝ այդ համատեքստում մասնավորապես անդրադառնալով անտառվերականգնմանն ուղղված լայնածավալ աշխատանքներին:

Նշել եմ նաև, որ Հայաստանի կառավարությունն արդեն իսկ տրամադրել է զգալի միջոցներ անտառվերականգնման ծրագրերի իրականացման համար և հավելել, որ անտառների տնկումը նաև տնտեսապես է շահավետ, և բավարար միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի ավելի արդյունավետ պայքարել կլիմայի փոփոխության դեմ:

- Ս.թ. դեկտեմբերի 10-ին մասնակցել եմ նաև Կայուն նորարարական ֆորումի «Ներդնելով իրական արժեքներ համաշխարհային բնության մեջ» պանել քննարկմանը, որի ժամանակ ներկայացրել եմ Հայաստանի բնապահպանական քաղաքականության նորարարական գործիքակազմը: Կայուն նորարարության ֆորումի շրջանակներում իրականացվել է մտքերի փոխանակում՝ կլիմայի մեղմմանն ուղղված ծրագրերի, նոր ֆինանսական մեխանիզմների ներդրման շուրջ:

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

2019թ. դեկտեմբերի 11-ին Մադրիդում կնքվեց «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և Ավստրիայի Հանրապետության կայունության և զբոսաշրջության դաշնային նախարարության միջև շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման Հուշագիրը:

Հուշագիրը ստորագրեցին Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և Ավստրիայի Հանրապետության կայունության և զբոսաշրջության դաշնային նախարարները:

Հուշագիրը նպատակ ունի միասնական ջանքերով նպաստել շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում համագործակցության նախագծերի և գործողությունների համատեղ իրականացմանը՝ հուշագրի կողմերի ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Երկու երկրների նախարարությունները հուշագրով հաստատել են համագործակցությունը

- կլիմայի փոփոխության
- կենսաբազմազանության պահպանման
- ջրային ռեսուրսների կառավարման
- շրջակա միջավայրի մոնիտորինգի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգերի կատարելագործման
- վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման
- բնական ռեսուրսների կայուն օգտագործման
- էկոտուրիզմի
- և ոլորտին առնչվող այլ հարթություններում:

Շրջակա միջավայրի նախարար

Էրիկ Գրիգորյան

12/16/2019

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092